



12. ԴԵՐՁԻԿԻ ԱԽՉԻԿ

Ժամտնակով ըլլում ա մի հատ դերձիկ, դրան աչքի սև ու սիւտակ մի հատ ախշիկ ա ունենում: Էդ դերձիկը իրա ախշիկը տանըմ ա մի հատ օղուշաղի մոտ ձեռագործ սովորի:

Շատ ժամանակ էդ ախշիկ գնում ա կար անելու:

Էդ ուստի տան դեմ ու դեմին Թաքավորի պալատ ա ըլլում: Էդ Թաքավորին մի հատ տղա ա ունենում. էդ տղեն օրը շարի իրիկուն բալկոնումը բոլթա ա տալի, որ էդ ախշկա էրեսը տենա, կամ խոսա:

Ախշիկը իրա գլուխը կախ կարում ա, մտիկ չի անում Թաքավորի տղին:

Թաքավորի տղեն ճարահատյալ ուղում ա խոսացնի, ասըմ ա վերևիցը.

— Դերձիկի ախշի'կ, շա'ն ախշիկ, Թակալի կուժը քանի՞ ա:

Ախշիկը չի խոսում:

Թաքավորի տղեն իրեք անգամ էդ խոսքը ասըմ ա:

Ախշիկը իրա գլուխը քաշ արած, ասըմ ա.

— Թաքավորի տղա', շա'ն տղա, էրկնքի աստղերն քանի՞ ա:

Ախշիկը գլուխը քաշ արած, վիրև չի Թամաշա անում, ասըմ ա էդ խոսքը իրեք անգամ:

Մյուս օրը թաքավորի աղեն շատ ա մտածըմ, որ ախչկան խաղք անի, սրտի հայիֆը հանի: Կանչըմ ա ախչկա ուստին, ասըմ.

— Մայրիկ ջա՛ն, ինչ ուզում ես կտամ՝ ինձ պըտի տանես քու աշակերտի մոտ, ես պըտի պաչեմ նրան:

Պառավ ասըմ ա.— Շատ լա՛վ, թաքավորի տղա, դըլխիդ արե-վիդ դուրբան:

Մյուս օրը պատրաստում ա մի հատ մեծ դութիկ իրա տանը. թաքավորի տղին թաքուն կանչում ա, ասըմ.

— Բալա ջա՛ն, գըլխիդ, արևիդ դուրբան, արի՛, մտի սնտուկը: Թաքավորի տղեն մտնում ա. վրեն շորերով ծածկըմ ա:

Պառավը ախչկան թանպա ա անըմ.

— Բալա ջա՛ն, տուն էթալուս ձեռագործը կըգնես մեծ դութին: Ախչիկը. «Լա՛վ», ասըմ ա, ձեռագործը գնում ա դութին:

Դնելու ժամանակ թաքավորի տղեն հասնըմ ախչկան պա-չըմ ա:

Ախչիկը սուս ու փուս, մեկի էլ բան չի ասըմ, գնըմ ա տուն:

Մեկ, էրկու օր չի գնում ուստի տունը, դաստինա հիվանդ ա պառկըմ, ասըմ ա. «Ա՛», մոնց անեմ, իմ ինատը հանեմ»:

Հերն ու մերը տենըմ են շատ մտածըմ ա, ասըմ են.

— Բալա ջա՛ն, ի՞նչ ես մտածըմ, ի՞նչ ա սիրտդ ուզում՝ առ-նեմ, կարեմ:

Ախչիկն ասըմ ա.— Հայրիկ ջա՛ն, ինձ համար մի հատ ըռա-տոնտ կկտրես, էնպես կկտրես, որ մենակ աչքերս էրևա միջին, թևերը թեպրնեբով կշինես հրեշտակի ձևով. էդ ըռատոնտի բոլորը սրժոժ կշարես, որ մի ասեղի տեղ բաց չըլլի:

Հերը կպատրաստի, կքերի, կասի.

— Ա՛յ որդի, մի հագի՛ էս դալըմը, ման արի, աչքս տենա:

Ախչիկը կհագնի, իրան մի կթափահարի՝ կտենա լավ հրեշտա-կի ձևի ա էլե, իրան ձեռնտու ա, կասի.

— էթում եմ ուստիս տունը, էս գշեր չեմ գա:

Ախչիկը կէթա, իրա ուստին կասի.

— Հերս, մերս տեղ են գնացել, գշերս էստեղ պըտի մնամ:

Կասի.— Որդի՛, լա՛վ, մնում ես՝ մնա, ի՛նչ անեմ:

Կգա իրիկուն, հացից վերջանալեն հետո ախչիկը թաքուն կը-նիլնի թաքավորի տղի ծառայի մոտը, կասի.

— Ա՛յ տղա, էս գշեր թաքավորի տղեն ինձ ուզել ա, ես թա-

բուն պրտի էթամ մոտը. դուռը բաց, դու դնա՛, քնի, եթե ուրիշի ասես, աւա՛վոտուն թաքավորի տղեն քեզ քյալլա կանի:

Բոլորը ղնելուց հետո ախշիկը իրա թազա ասւապը վե կալավ. տարավ, թաքավորի տղի հաշտըմը հադավ, մտավ թաքավորի տղի սենյակը. կաղնեց, իրան մի թափահարեց, ղընզընկոցը ղնկավ պալատը:

Թաքավորի տղեն աչքերը բաց արեց, տեհավ՝ մի այլակերպ բան ա կաղնած, ասեց.

— Հը՛, ո՛վ ես, ի՞նչ ես ուղում:

Ասեց.— Սա Գարբիել հրեշտակն եմ, եկել եմ քու ֆոգին առնեմ:

Ասեց.— Սա միսուճար եմ. խաղնա, դաֆինա տամ, իմ ֆոգին մի՛ առնի:

Ասեց.— Թե որ ղղենց ա, ես քեղ տաս օր ժամանակ կտամ, բու օթախից մի նշանաբան պրտի տանեմ:

Թաքավորի տղի ձեռները, ոտները դողում էր վախիցը, ասեց.

— Դու դիտաս, ինչ աչքդ կբռնի՛ վե կալ տա՛ր:

Վե՛ կտա՛վ ոսկե իբրուխ-լականը, սսեց.

— Պատրաստ կաց, տասն օրից հետո պրտի դամ, քու ֆոգիդ էլ տանեմ:

Տուն էկավ, էդ իբրուխ-լականը իրա շորերի հետ տարավ, սրեց ղութու մեջ:

Կիսը բացվեց. ախշիկը նստեց, իրա դործը արեց:

Թաքավորի տղեն շա՛տ ճմրտըկաց, շկարաց վեր կենա հրեշտակի զարսիցը: Անճարացած վեր կացավ, գնաց բալկոնը, յավաշ-յավաշ, ասեց. «Մի բան որ ես պրտի մեռնեմ, յավաշ, էս ախշկան խոսացնեմ, խայտառակ անեմ»:

Ասեց.— Դերձըկի ախշի՛կ, շա՛ն ախշիկ, ղութու սպաշը բանի՛ ա:

էդ խոսքը իրեք անգամ ասեց:

Ախշիկը իրան ղլուխը բանձրացրեց, ասեց.— Թաքավորի տղա՛, շա՛ն տղա, Գարբիել-Մուքելը քանի՞ ա: Թաքավորի՛ տղա, շա՛ն տղա, իբրուխ-լականը քանի՞ ա: Թաքավորի՛ տղա, շա՛ն տղա, տասն օրվա մեռնելը քանի՞ ա:

Թաքավորի տղեն շատ մտածեց.— Կա՛-չկա,— ասեց,— էս ախշիկը աստղաբաշ ա, առաջ աստղերուց հարցուց, հըմի էլ իմացավ իմ մեռնիլը:

Գնաց, նորից պառկեց, արեց.— Ա՛խ-վա՛խ, ա՛խ-վա՛խ, ես պրտի մեռնեմ:

Թաքավորի աղեն ըրտան պառկած տեղիցը մտածեց, ասեց. «Կա-չկա իմ մեռնիլը էս ախշիկը կիմանա, որ համ էրկնքի աստղերով խոսաց իմ հետ, համ Գարրիել-Մուքելով. ես պրտի էղ ախշիկան առնեմ, ճար արեց՝ էդ ախշիկը կանի»:

Թաքավորի տղեն իրան ծառեն ղրկեց իրա հորը մոտը, ասեց.— Ես մեռնու. նմ, տերտեր բերեք ինձ:

Հերն ու մերը էկան.— Ա՛յ որդի, մեր թաքավորութունի միջին ի՛նչ ա պակաս, «ա՛խ-վա՛խ» ես քաշում. մարդ ղրկեմ, քաղաքե-լուղաք, քեղ համար բժիշկ բերեմ:

Ասեց.— Կա՛-չկա՛, Գերձըկի ախշիկան պրտի ուզեք:

Թաքավորը ասըմ ա.— Շատ լա՛վ, զորքով ըլնի կբերեմ, խաթրով ըլնի կբերեմ, դու թաքիւլա լավացի:

Նազիր-վաղիրը կանչում, ղրկում ա դերձըկի տունը՝ ախշիկան ուզելու: Ախշիկը տուն ա դալի, հերն հարցնում ա.

— Ա՛յ որդի, թաքավորի տղեն կառնե՞ս, էկել են քեզ ուզելու:

Ասըմ ա.— Որ դու տաք, ես էլ կուզեմ:

Բերըմ են էդ ախշիկան, պսակըմ են թաքավորի տղի վրին:

էդ ախշիկը իրա ըռատոնտը վեր ա առնում, ջճեզ ա տանըմ իրա համար:

Մի քանի օր մնում ա, էդ տղեն շատ «ա՛խ-վա՛խ» անըմ, ախշիկա ծոցը շի մտնում: Ախշիկն ասըմ ա.

— Ա՛յ տղա, որ ինձ հավան չէիր, իմ մեղքի տակ խի՞ մտար:

Թաքավորի տղեն ասըմ ա.— Ա՛յ Գերձըկի ախշիկ, ես պրտի մեռնեմ, ինչ մտնեմ, որ մնաց վեց օր իմ ժամանակը:

Ասեց.— Որ վեց օր մնաց, ես էթում եմ:

Հարսի շորերը հաղնըմ ա, մնաս բարև անըմ, դնըմ ա հաշտը, ըռատոնտը հագնըմ ա:

Տղեն հիվանդ պառկած ա ըլլում, ասըմ ա.

— Կնիկս փախավ, գնաց, ես հըմի պրտի մեռնեմ:

էդ մտքի միջին ախշիկը գալիս ա տուն, էդ ըռատոնտը վիրա ժղահարում ա, թափ ա տալի:

Տղեն մտիկ ա տալըմ.— Օհո՛, էն Գարրիել հրեշտակը էկել ա ցերեկով:

Ասրմ ա.— Քաբավորի տղա՛, հըմի որ պսակվել ես, էս հետ
Ֆոգիդ պրտի առնեմ:

Քաբավորի տղի լեզուն կապվում ա, ձեռը, ոտը թուլանում ա:
Կնիկը առնում ա, չէ, անճարացավ, պրտի հիվանդութունը
հաստատի, բղում ա Քաբավորի տղին, ասրմ:

— Ախմա՛խ, վե՛, վե՛, ես հրեշտակ չեմ, ես քու կնիկն եմ:

Ասրմ ա.— Քե որ իմ կնիկն ես, գնա՛ իբրուխ-լականը բե,
տենանք:

Բաց ա անըմ կամոտի աչքը, իբրուխ-լականը դնում ա Քաբա-
վորի աղի աղաքը:

Ասրմ ա.— Քե որ ըղենց ա, շորերդ հանա, տենամ իմ կնի-
կրն ե՛ս:

Կնիկը շորերը հանեց:

Քաբավորի տղին ասեց.— Ա՛յ կնիկ, որ ըղենց ա, դու հրաբու-
նի ես. արի, ինձ դուղն ասա, հրեշտակների հետ հնդերութուն
ունե՛ս:

Կնիկն էլ ասրմ ա.— Դու շատ կապրիս, էլ չես մեռնի, արխա-
յին կաց:

Ասրմ ա.— Ա՛յ կնիկ, բա էրկնքի աստղերն ի՞նչդար ա, որ
հարցնըմ իր:

Ասրմ ա.— Բա կարի կութը քանի՞ ա. կարի կութը շհամրվի,
էրկնքի աստղերն էլ շհամրվի:

Քաղատան վեր են կենըմ, օխտը օր, օխտը գշեր քեֆ-ուրա-
խութուն:

Իրանք հասան իրանց մուրազին, դուք էլ ձերը:

